



ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱԶՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ГИМНАЗИЯ ИМЕНИ А.Г.ЕРИЦЯНА ПРИ ФИЛИАЛЕ МОСКОВСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ М.В.ЛОМОНОСОВА

✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 172.

☎ +374 11 900111 (114)

Email: School@msu.am

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՈՐԻՆԱԿ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (X դասարան)

Հարգելի՛ դիմորդ

«Մաթեմատիկա» առարկայի ընդունելության թեստը բաղկացած է 32 առաջադրանքից:

1-29 առաջադրանքները պահանջում են համառոտ լուծում, որոնց միջոցով ստուգվում են դիմորդին ծանոթ կամ փոքր-ինչ փոփոխված իրավիճակում գիտելիքների օգտագործման կարողությունները: Կարճ պատասխան պահանջող յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում գրել լուծումը և պատասխանը:

30–32 առաջադրանքները պահանջում են ընդարձակ լուծում, որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ունեցած գիտելիքների կիրառում: Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքն առաջադրանքից հետո՝ նշված տեղում:

1 – 22 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

23 – 27 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

28 – 29 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 3 միավոր:

30 – 32 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 4 միավոր:

Թեստի առավելագույն գնահատականը 50 միավորն է:

Թեստի առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

Մաղթում ենք հաջողություն:

Ушу I. (1-29).

1. Մտապահված թվին գումարեցին 7 և արդյունքը բաժանեցին 5-ի, ստացան 10: Ի՞նչ թիվ էր մտապահած:

[illegible]

Պատ.՝

2. Աստղանիշի փոխարեն տեղադրել այնպիսի թիվ, որպեսզի ստացվի ճիշտ հավասարություն՝ $\frac{21}{*} = \frac{7}{9}$

[illegible]

Պատ.՝

3. Գտնել $\frac{2}{3}$ և $\frac{5}{6}$ գումարի հակադիր թիվը:

[illegible]

Պատ.՝

4. Ո՞ր ամենափոքր թվանշանով պետք է փոխարինել $\overline{121} * 121$ թիվը բաժանվի 2-ի և 3-ի միաժամանակ:

[illegible]

Պատ.՝

5. 69 թվի ո՞ր մասն է կազմում 46 թիվը:

[illegible]

Պատ.՝

6. a -ի ո՞ր արժեքի դեպքում $x = -1$ կլինի $5(a+x) = 3(5+a)$ հավասարման արմատը:

[illegible]

(23-24) 450 մ երկարությամբ շրջանագծով միաժամանակ սկսեցին վազել երկու վազորդ նույն կետից տարբեր ուղղություններով: Նրանց արագություններն են 4 մ/ր և 5 մ/ր:

23.Քանի՞ թույլից վազորդները կհանդիպեն:

[illegible]

၇၂၂၂.

24.Քանի՞ մետր կանցնի առաջին վագորդը միջև հանդիպումը:

[illegible]

၇၂၂၂.

--

(25-27) Կանոնավոր եռանկյանը ներգծած շրջանագծի շառավիղը 3 սմ է:

25. Գտնել եռանկյանն արտագծած շրջանագծի շառավիղը:

[illegible]

Πωλη.

--

26. Գտնել եռանկյան կողմի երկարությունը :

[illegible]

--

Մաս II. (30-32) Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը:

30. Հավասարասրուն սեղանի պարագիծը 20 սմ է: Անկյունագիծը կիսում է 60° անկյունը և ուղղահայաց է սրունքին: Գտնել սեղանի միջին գիծը:

[illegible]


--

31.Նավակն անցավ գետի հոսանքի ուղղությամբ 120 կմ և անմիջապես հետ վերադարձավ՝ ամբողջ ճանապարհի վրա ծախսելով 7 ժամ: Նավակի արագությունը կանգնած ջրում 35 կմ/ժ է: Գտնել գետի հոսանքի արագությունը:

[illegible]

--

32. a -ի ո՞ր արժեքի դեպքում $x^2 - 10x + a - 1 < 0$ անհավասարումը լուծում չունի:



Պատ.՝